

**ԲԱԺԱՆՈՂ ԳՐՈՒԹԻՒՆ**  
 Պուլխարիոյ համար  
 Տարեկան 12 մր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արսասահմանի համար Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 մր.  
 Վեցամսեայ 1.50 »  
**ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ**  
 Իրանուցման տողը առաջին երեսին համար 40 սակարկու հ. իսկ վերջին երեսի համար 20 սակարկու հ. երեսին աւելի անգամներու համար 20 ՍՈՂ զեղջ կը լայն :

Վառնայի համար ձեռքի 10 սակարկու

# ՇԱՌՈՒՄ

Նամակ եւ դրակ դրկեց  
 իմ քաղաքեանս հասցիին  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)  
 Գրութիւնք եւ չեմ տրուի  
 Արսասահմանի ձեռքի  
 )( 20 ՍԱՆԹԻՄ )  
 Պուլխարիոյ համար ձեռքի  
 = 15 ՍԱՆԹԻՄ =

**ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ**  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՔԻ ԵՒ ՇԱՌՈՒՄ ՕՐԵՐԸ

ՇԱՌՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՂԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՂԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

**ՄԵՐ ԲԱԺԱՆՈՂԻՆԵՐՈՒՆ**

Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները, եթէ փոքր ինչ պարտաճանաչութեան զգացմունք ունին, կարգացին մեր նախորդ ազգերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու տնտեսները պիտի յայտարարուի Շարժումի մէջ : Գտնուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել. իսկ մէկ կարեւոր մասն ալ դեռ արձագանք չը տուաւ : Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակ կը արուի մինչեւ դեկտ. 15ը : Մինչեւ այդ օրը պիտի սպասենք. ու այնուհետեւ իսկոյն պիտի հրատարակենք :

**ՁԵԶ ՉԸ ՀԱՍԿՑԱՆ**

Ապրիլ չուրեցիք, կեանքը ձեզ ծանր էր  
 Գանի մեր ազգը կը մնար անտէր. Գուք խոր զգացիք ցաւերը հայուն, կոտորակներն մէջ վրիժեցիք արիւն, Բայց մեղի, այլասեր հայերն անարժան  
 Ձեզ հայրեցին, ձեզ չհասկցան...  
 Կենցաղը հանգիստ կամաւ մեր ժեցիք,  
 Դուք ձեր ասպարէզ իսպառ դրժեցիք,  
 Տապալակ ազգին ցաւերուն դարման Ընելու համար ի՞նչք դերեցան.  
 Չոր սիրտ, անձնասէր հայերը դաժան  
 Յիշոց կարգացին, ձեզ չհասկցան...  
 Արի սրտերնիդ, օտճի հառակնիդ, Կանանչ կեանքերնիդ, ամբողջ արիւննիդ  
 Համակ զոհ բերիք փրկանքի փոխան, Հայութեան վերջին իրր բալասան. Հաճոյքի զուակ մարդիկ խապաձայն Պարսաւ կարգացին, ձեզ չհասկցան...  
 Անուշ աչքերով աչկին ատեցիք. Ձեր սիրտն զգայուն թուաւ հարեւնիք,

Սիրականի տեղ զէնքը գրկեցիք,  
 Լիլաձ կոյսերու վրէժ լուծեցիք,  
 Բայց վառ հոգիներ ձեր գործն ուրացան,  
 Ա՛խ ի՞նչու մեռաք, ձեզ չհասկցան...  
 ԿԱՐՈ  
 31 հոկտ. Ֆիլիպէ

**ՊԱՏՐԻԱՐԲ ՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ**

Հայ պատրիարքը, հին ժամանակներէ ի վեր, բաւական զօրաւոր հեղինակութեամբ մը իր ազգին օգտին հաւատարիմ ու հաշտարար դեր մը կը կատարէր միշտ սիրող կառավարութեան առջեւ, կարելիութեան սահմանին մէջ վանելով անկէ եկած պարբերական դատարարութիւնը կերպով պաշակառանք կ'ազդէր՝ պալատին՝ յարգուելով ու սիրուելով նաև օտար շրջանակներու կողմէն : Սակայն տարաբաղաբար, վերջերս անոր ազդեցութիւնը զգուշացած զօրացած անուանական դարձած է բոլորովին :

Հայ պատրիարքարան, որ երբեմն մեր ցաւերուն դարմանատունը, մեր ապաստարանն ու փրկարանը կը ճանչցուէր, հիմա պարզապէս նշանախօսութեան, հարսնիքի և շնորհաւորութեան սրահի մ'է փոխուած : Թատրոն մ'ըլլալ կը թուի, որուն ձեռնածու դերասանը պատրիարքը, յօրանջող հանդիսականներն ալ անոր արբանեակ ժողովականները կը կազմեն :

Իսկ ժողովուրդը—ՁԱՆՈՒՄԻ ԸՆՏՐՈՂՈՂԸ—հոն տեղ չունի ընդունուելու, հոն ձայն չունի լըսուելու, ա՛ն է դուրսը մնացողը, տառապողն ու տանջուողը. ա՛ն է օպաստողն ու անմիտ յուսացողը... :

Անդին մեր կղերականութիւնը իրեն պետէն օրինակելով, կեղծաւորութեան, կանացի փափկակեցութեան և անկարգութեան կատարին բարձրացած է ամբողջութեամբ, այնպէս որ կը տարակուսինք բացառութիւններն անգամ խնայելու բարեմտութիւն

ունենալ, վասնզի անոնք չեն խնայեր բնաւ իրենց հօտին, երբ հանգիստնին վրդովուի և կամ հրամայուի կեղծութիւնը թողուլ ու քիչ մ'ալ հեռուներն երթալ հովուելու, կոչումնին արգարացնելու համար :

Եթէ յանկարծ կաթողիկոսական պատրիարքական ընտրութեան, արուարձաններու, Զմիւռնիոյ, Եգիպտոսի ու Եւրոպայի առաջնորդութեան խօսքն ըլլայ, անոնցմէ քանի մը տասնեակ (\*) եպիսկոպոսներ անձնուզիր պատրաստ են դործի գլուխ անցնելու. բայց երբ ճիգրանակերտի, Պուլանըիսի, Բաղէշի աթոռներն առաջարկուին, պահանջկոտ են, անկարող են, հիւանդ են... : Անթթ, հազար ամօթ անոնց և հականներուս, որ զանոնք դեռ կը պատուենք, դեռ թոյլ կուտանք թիւերնին շտոցնելու ապշօրէն :

Ու ահա անոնցմէ մէկը, այս թէ այն կերպով կենէ կ'ըլլայ պատրիարք հովիւ, իբրև ազգին խնամապար առաջնորդ, մինչդեռ իր փանութեան մէջ իրեն անձին լոկ պահանջող՝ իր փութայ փորը մեծցնել, վիզը գերցնել, գրպանը լեցնել ատեն մը, օր մը չէ օր մ'ալ կը հրաժարի բոլոր փառամտութիւններն յափարցնելէն ետքը. Այ՛ս է եղածը և այս կը կրկնուի միշտ միակերպ :

Մեծ օրինակ մ'է արգի Պատրիարք Օրմանեանը, Բնաւ անիրաւած չենք ըլլար, երբ անմիջապէս յարենք թէ՛ անոր պաշտօնավարութիւնը բացարձակապէս պտտուհասի շրջան մ'եղած է մեզի համար. իր օրով անխղճութիւն չը մնաց թափուեցաւ հայուն գլխուն : Պայազիտ, կարին, Վան, Մուշ զրկանք ու բանտի, կեղծքում մ'ու խողխողանքի ցփին քամեցին մինչեւ վերջին մեծը :

Ամէն տեղ ազգին տարրական իրաւունքներն անգամ կապտուեցան բռնակալին կամայականութիւններուն տակ : Այս եղելութիւններուն հանդէպ պատրիարքարանը քայլ մը, ճիգ մը բողոքի բառ մ'ը իսկ չ'արտասանեց. անոր ամէն ճարտասանութիւնները Աստուածաբանական քարոզներուն՝ վերացական ցնդումներու շուրջը դարձան ու կը դառնա՞ն տակաւին :

Կ'ըսուի թէ, Ֆրանսա—թրքական վէճի տաք ժամանակը դուրս ելնելու կը տատամսէր և կամ առ առաւելն շուտ մը պատրիարքարան կիջնէր, ու անկէ ուղղակի Բերսոյի բոյնը կը դառնար, առանց վայրկեան մը ուրիշ տեղ հանդիպելու, վախնալով որ մի պատերուն քովէն անցած ատեն կասկածելի երևայ իր սիրելի Նուլթանին աչքին :

Անգութ, անիծած, միթէ յարմար ժամանակը չէ՞ր գտնէ. թեթե դիմում մը ընելով Սասունի վերջին կորուստն ու սարսափը ներկայացնել Ֆրանսական ներկայացուցչին երկտողով մը, որ աւելի պիտի արժէր անշուշտ քան հիւպատոսներէ եկած երկար տեղեկագիրներ : Թէ՛ չըրաւ այդ բանը, և թէ՛ աւելի ահուկին, թուրք կառավարութեան շտտինքն աշխատեցաւ Մշոյ շրջակայքի անցքերը աննշան դէպքեր ցոյց տալ ուրիշներուն ալ : Լուսթիւնը հաշուին կուգայ իր մորթը թող աղաւթ, անդին ինչ կ'ըլլայ թո՛ղ ըլլայ :

Ո՛չ, պարտք կատարել անոր համար յիմարութիւն ու պաշտօնին պահանջը գոհացնել՝ ամէն ղ ժուարութեան առջեւ նահանջել, աչք փակել անցնել կը նշանակէ : Շատ փորձեցինք, շատ ալ համբերեցինք, բայց զէթ քիչ բան մ'ալ չը տեսանք զիստէ զատ : Եւ ի՞նչ յուսալ մարդէ մը, որուն թուրքութիւնը՝ անզգայութեան, անպարտաճանաչութիւնն ալ առնամօթութեան հասած է : Ան իրաւունք ունի, քանի որ զինքը

(\*) Կիլիկիոյ ընտրութեան ցանկին մէջ քան եւ ութ հատ շարուած են, որոնց շտոք պարագա եւ կամ Պոլսոյ թաղերուն մէջ կը սլքական քարոզչի տնտեսով :

չենք կրնար նեղել, պէտք էր ուտել նախատինքը...

Երբէք չուրախանանք թէ, այս օրեր Սիսի կաթողիկոսական ընտրութեանը...

ՅՕԳՇԱՆ

ԵՏԵՆԷՍԻ ԶԱԿՏԻՆ

(-o-)

Շարժումն մէջ եղբորս Վահան Մազմանեանի ամբաստանագիրը...

Վահան Շահրիմանի գրական և գիշարուեստասիրական ակնանկութեանը...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՔՕՆ

Սաքօն բաղդը յաղողեց : Մի քիչ ժամանակի մէջ նա կարողացաւ դիպել բաւական հարստութիւն...

Վերադարձաւ այն ճամբով որով գնացել էր Երջ պանդխտութեան...

Հազիւ մէկ ժամի շափ հետեւ էր գտնուում իւր հայրենի տնակից, նա վար ցատկեց ձիուց...

կան կարողութեան ունեցած ամբողջ ուժը թափել էր բայց մենք գրական ետորչի ելած չենք...

Վահան Շահրիմանի իր բոլոր մաղձը ինծի դէմ կը պոռթկար...

Հիմա ես, ըստ Շահրիմանի, Բարիզի ցաւագարս, պիտի ստիպուիմ ներկայացնել զինքը...

Ահաւասիկ խնդիրը իր իսկութեամբը և ամբողջութեամբը...

Խնդիրը թէեւ նոր հրապարակ ելաւ, բայց հին է...

Ութ ամիսէ ի վեր կարգիւմ եղաւ որ հրապարակէ մինչև որ ես ալ բացարձակապէս համոզուեմ...

Վահան Շահրիմանեանը, եթէ չի կրնար ներքին որդէ մը եւ գող սիրտը գող չըլլարնէ...

Տեսաւ : Ահաւասիկ իր խօսքերը որոնցմով կաշխատէր արդարացնել ինքզինքը...

Այս պատմութեան յետոյ ըսաւ ինծի թէ աղբը այս Խնդիրը երեւան մի հանէք...

Վահան Շահրիմանի տեղ յաղորդ օրը Պ. Արզար Պարսամեան մեզի եկաւ...

Պ. Անդրանիկ Պարսամեանը, եղբայրը Արզարը եւ Յակոբ Աբէլեանը Շահրիմանին եկած իրիկունը...

Փափկանկատութեամբ փակել ու գեր են խնդիրը եւ դարձեր են ուրիշ նիւթի վրայ...

Սաքօն համար ալ տուն ինչ վերջացած էր. նրա առջեւ ասէն բան կորցրեց իրան փայլը...

Գիշերի մթութեան մէջ անյայտացաւ և Սաքօն :

Միտին գիշեր մ'է, այն գիշերներէց մին, որ ասէն ինչ կը թագցնէ :

Հայրուկները անչուկ գտնում են բողբոջի անձանոթ մի ճամբով թփերի միջից...

Հեռուն կը փայլին կրակներ, պաշարուած են թշնամի բանակով...

Յանկարծ հայրուկներէց մին կանչում է. տղերք յարձակինք, կրակ—և փողը հնչում է...

Խմբակը յարձակեց, երկինքը գոռում է, երկիրը որոտում : Սաքօն

զէր գրադիլ, կոստիով որ իր բացատրութիւններով չի կրցաւ մեզ համոզել...

Իմ գոյացուցած անհատական համոզմունքս եկան աւելի ամրապնդեցին Շահրիմանի բարեկամներու կասկածներն ալ...

Իրրեւ Հնչակեան ընկեր, ասոր վերայ, Լօնտօն Հնչակեան կուսակցութեան անդամներէն մէկուն նամակ գրեցի...

Սեպտեմբերի հեղինակին ճակատին Շահրիմանեանը գիտատրով մէկտեղեց ինքն Սարգիսեան ընկերակազմ : պտեանի մը առջեւ...

2. Բարիզ թէ ինծի եւ թէ ուրիշներու ըսած է թէ թուրք կարգացի, սրբազրեցի եւ պատուցի, իսկ սեպտեմբերի մէջ այսպէս լիկտ օրը...

Իր գրածին ըսածին մէջ հակասութիւն չի տեսնար ընթերցողը :

3. Շահրիմանը կրակ, թէ արդիւն ալ ուզելի վարժուելին գաւառէն ներկայացնեք...

Իր գրածին ըսածին մէջ հակասութիւն չի տեսնար ընթերցողը : Բարեբեռն տնայնոցը, վերադարձաւ ներկայացնելու, ձերբու խրինջիւն հրացաններու բանքիւնը...

Ուր որ փողը օգնութեան է կանչում հոն է թուում Սաքօն և անձնատանտան հայրուկներին վստահութիւն ներշնչում, ինչ որ գուցէ ինքն էլ չուէր :

Քրդերը թողնուած են վրայ, Քրդա ճշարով, իսկ հայրուկները համախմբուած են Սաքօնի շուրջը, և յարձակվում աւելի կատաղի կերպով...

... Ահ, նա յարկովեց ... Թշնամի անարգ մի գեղակ մղվում է նրա կողմէն մէջ, Հայրուկ ընկերները կանչում են Սաքօն—իսկ Սաքօն կանչում է կոխ, յետոյ վիճի մղվում մտրում է նրա շրթերին վրայ :

ԱՆՈՒՇԱՒԱՆ

Վ Ե Ր Ջ

վարժուհի մը կուզէր: Եւ ճարտարապետական փորձի եկած չէր նրա հոգաբարձութիւնը արդէն վարժուհի մը ապագամ էր եւ չէր եկած. կը փնտրէին ուրիշներ, մէկ երկու անուններով, հետ մէկտեղ քննիչի տնունը տրուեցաւ կամ քննիչ պիտի հրաւիրէին եւ կամ միւսը, հոգաբարձութիւնը հրաւիրեց քննիչ. որը մերժեց գալը, ըլլար իմ քննիչ եւ կամ ուրիշը հոգաբարձութիւնը Պօլսոյ մէջ կը փնտրուի կոր իր գլխաւոր ուսուցչուհին. հետեւաբար Եւրոպական մանկանի վէթօի խնդիրը չի կայ. գալիքը ով ալ ըլլար իրանց նպատակն է եղեր, ինչպէս կը տեսնուի արգելիչ, որպէս զի վարժուհիին պահար է եւսն Սարգիսեանով գոցուի, ուրիշն ալ պարտաւոր չի կար թէ՛ մասնաւորութիւնը պէտք էր կատարուի իւր Սարգիսեանի պաշտօնը ապահովելու համար. անուստիկ այս պարագային էր որ Եւրոպական ամէն զոհողութիւն կրնէ իր պաշտպանեալին: Մենք կրնանք պնդել թէ՛ չէ թէ մասնաւորութիւնը մտածուած է միայն հապա նաեւ կատարուած է էւսն Սարգիսեանին խմբագրած եւ Եւրոպականները սրբագրած մատուցած գիրքը եթէ զրկած ըլլար եւնի Սարգիսեանի քննիչն որ արդէն իմացած ըլլալ որ քննիչ Պուլկարիս պիտի երթայ, եւ ինչ բանի վրայ հիմնուած պիտի կանչէր աներձադ ու ընէր հետեւեալը՝ քոյրդ երբ պիտի երթայ, քոյր աներձադ քաջատրուութիւն կը պահանջէ քննիչ կրնէ թէ՛ մեզի պատուիրած է իմու խապէր չի տալ: Մէկ կողմ ձգենք բոլոր հակասութիւնները, սուտերը, փաստերը, եւ հարցնենք հիմա, թողունք գործադրել, մատուցած գաղափարը յղանալը իսկ միթէ ինքնին հրէշութիւն մը չէ՞. մատուցող այնպիսի մարդու համար որոնք ուսուցիչն, լրագրի թղթակից գործիչ են՝ որոնց մէկը փրկուի իր անհատական կողմէն անգամ միւսը երբեք չեն կրնար ներկայացուցիչն էր եւ այլն:

Մեր մեծահոգի ազնիւ փճացածը, իտէլական եւ ոչ բողոքած բարոյականութիւնով մը. կը ծոխ կը բռնէ իր Սարգիսեան բարեկամի ուսերէն անկման տիղմին մէջէն դուրս քաշելու համար. բարի, բայց պէտք է գիտնալ, որ իր Սարգիսեան բարեկամը յէղափոխական մըն էր, եւ ինչպէս կը տեսնուի, Սարգիսեանի վրայ տկարութեան նէսպէթները յաճախ կը կրկնուին, եթէ իւրաքանչիւր նէսպէթի ժամանակ մէջմէջ ուճի դաւաճանութիւն, մատուցողն գործելու ելլայ եւ Եւրոպական ամեն մէկ անգամին քովը ըլլալ իր ոչ պոստիկացած բարոյականով արթնցնել Սարգիսեանի մէջ մեռած բարոյականութիւնը, ինչ չարիքներ պիտի ծնին եւ ո՞վ պիտի ըլլայ պատասխանատուն:

ԱՐԱՄ ԲԱԿԱՐԱՏ

Բարիք

Յ. Գ. — Եւրոպական համոզում ըլլալով որ օր մը չէ օր մը այս խնդիրը երեւան պիտի դար. շնորհիւ իր բարեկամական կապերու Լօնտոն նենուեցաւ որպէս զի երբ խնդիրը երեւան գար աշխատէր կուսակցական գոյն տալ անոր:

Ահաւասիկ, «ազնիւ եւ դժուար ճամբան գործողութեան փութալու» բուն պատճառը:

նոյն

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ

ԻՐԱՆՈՒՆԻՔԻ ԴԵՍ ՈՒ ԴԵՆԻՆ

— 0 —

Նախ հարցում մը ընեմ ձեզ, վերջը պատասխանս կարգացէք իմ գրութեանս մէջ Իրանուքի խմբագիրը միայն Սարգիսեանի հետ մէկ հոգի վրայ տեսնել ուզած չէի. յի նահրիմանեանի անունն ալ տուած էի, այդ անունը հրապարակելու ինչո՞ւ չլացաք, այդ կողմնակցութիւնը ինչո՞ւ ամօթ չէ ձեզի:

Գուրպէթեանը Սարգիսեանի և Եւրոպականեանի հետ միեւնոյն հոգի վրայ տեսնելու համար, Իրանուքի երգուեալ թշնամի կը նկատէք զիս:

Նախ սա պէտք է հասկննել ձեզ թէ, ես ու ե թերթի թըշնամի չեմ ատիկա դուք շատ լաւ գիտէք, ինչու որ թերթերը միայն անձնականութիւններու սեփական չեն, այլ ազգինը ալ են:

Ձեզ նման խաթեր համար ըստորնացող վարիչներու համակիր չեմ, ուստի հրապարակաւ այդ ձեր անիմաստ և անխիղճ զըրպարտութիւնը ետ առէք:

Ու յետոյ շատ ողորմելի փաստեր մէջ բերած էք, ձեր բարեկամը պաշտպանելու համար, որ ծիծաղելի կը դարցնէ ձեզ. այն հրապարակի վրայ ասորիի, զպտիի եւ հուստիի և մինչեւ իսկ վասակ կեղծ անուն ստորագրողներ կան թերթերու մէջ, բայց երբ այդ անունները Համիաէն գրամ կորչելու համար կը գործածուին խնդիրը թողնուին կը տարբերի իսկ նամակի մը առակ, երբ հայ խմբագիր մը ժէօն թուրքերէն 50 ֆրանք կորզելու համար Յ. Շէֆքի (այսինքն Հասան Հիւսէին ըսել կուզէ չեմ գիտեր) եղած է, այն ժէօն թուրքերէն որ իր թերթին մէջ, Պօլսոյ ուլալա տակններուն վրայ վխտացող արիւնարբու սօփաճիւններէն տարբեր չենք ճոնշնար ըսելով Զօպանեանին վրայ յարձակած է, և միշտ ալ «յնպէս ճանչցած է ժէօն թուրքերը, կենէ և անամօթաբար այդ սօփաճիւններէն ձեռք բացած դրամ կը մուրայ: Ասանկ ստորին արարածի մը ինչ աճական տալու է:

Ասիկայ ազգային արժանապատուութեան դէմ դաւաճան մը չէ՞. ու յետոյ թող սպասէ ձեր բարեկամը, որ հասկննեմ իրեն թէ, նահրիմանով և Սարգիսեանով երորդութիւն կը կազմեն թէ չէ: Յետոյ կը գրէք թէ թերթիս յարգոյ խմբագիրը, իբրեւ հոգուգի խմբագիր. Սուլթանին դէմ հաւասար թսփող կուող խմբակի մը հետ մէկ երկու նամակ փոխանակելը որ շատ անգամ մեր մէջ յեղ. կուսակցութիւններն ալ հը:

րապարակաւ զգուշանալու պատճառ մը ունեցած չեն. իր հայրենասիրական ընթացքին բան մըն ալ կաւելցնեն կային:

Հիմակ որ բարեկամիդ պոչը ձեռքս անցած է, հիմակ կենէք մեր յեղ. կուսակցութեանց այդ ընթացքը կը գովէք, դուք չէիք ձեր թերթին մէջ Դրոշակը գետնէ գետին վարնողը, մեր ազգն ալ ասոնցմէ խեր կապասէ պոռացողը, երբ Դրոշակ ժէօն թուրքերի հրաւերին վրայ խոստացած էր ներկայացուցիչ մը զրկել իր կողմանէ, ի հարկէ ոչ թուրք անունով. մի պապանծիք այս հակասութեան ինչ պիտի պատասխանէք:

Յ. ԽԱՉԻԿԵԱՆ

Յ. Գ. — Հարցում մը Պ. Դէս ու Դէնին:

Ժէօն թուրքերու ծրագիրը մեզի նպատակաւ է թէ չէ, եթէ Դուրպէթեան իր հուզողով ի նպատակ ժէօն թուրքերու գործած ըլլար ինչո՞ւ համար չի նորհաւորէին 50 ֆրանք ուղած վայրկեանին զրկէին:

նոյն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փօքան 11 նոյ.

Ռուսներն անցնելով Պաքով, միեւնոյն ցաւալի բանը տեսայ ինչպէս և Ռուսն. բայց հոս սա առաւելութիւնը ունի որ հայրենասիրութիւնը աւելի վառ է քան Ռուսների հայոց մէջ: Միշտ չի նա. յետով գաղթականութեան անցան թուին, որ 7—8 շանցներ հետաքրքիր են լրագրի կարգալ ու հայրենիքի մասին տեղեկութիւններ ստանալ. կայ մի հայ սրճագործ միւսները բոլորն ալ հացագործ են, փուռերը կաշխտին և հազիւ իրենց օրապահիկը կրնան հայթաթել: Ցաւալի կէտ մը կայ, այն ալ լկտի կանանց հետ ապրելիւն է, որով կը փճանանան թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Անշուշտ պիտի զղջան, սակայն աւա՞ղ շատ ուշ պիտի ըլլայ:

Իսկ ընդի հայերը բնաւ չեն տարբերի Ռուսների հայերէն. հոս ալ նոյնպէս հայ լեզուն և հայութիւնը կորստեան դուռը հասած է, Հոս հայերը ունին մի հոյակապ եկեղեցի, որ գրեթէ Ռուսների մէջ միակ եկեղեցին է իր տեսքով թէ ներքին և թէ արտաքին կողմէ. դժբաղդաբար դատարկ է, կիրակիէ և շաբաթէ զատ գրեթէ ժամասացութիւն չըլլար: Հոս սկիզբէն ի վեր դպրոց չէ եղած և ըլլալու ալ յոյս չի կայ:

Տեղւոյն արժանապատիւ Տէր հայրը արգէն ծանօթ է Ռուսա-

նահայոց իր բարեսրտութիւնովը չի զլանար բնաւ իր բարոյական պարտականութիւնը կատարել հանդէպ այն հայերուն, որոնք հալածուելով քուսած են իրենց մայրենի երկրէն օտար աշխարհուր Հայաստանցիին կը նեղուի թէ կառավարութեան կողմէ թէ ուրիշ պատճառներով անմիջապէս հոն պատրաստ է օգնելու փոքրութիւ հօտին. ուրիշն մեր մասնաւոր շնորհակալութիւնը կը յայտնեմք յարգելի Տէր հօր:

Արդ Փօքանի մասին որքան կրցայ տեղեկանալ, Ռուսներիոյ բոլոր հայաբնակ քաղաքներէն ալ առաւելութիւն մը ունի, ինչպէս ծանօթ է նորոգութեան ընթացքը, որ առնուազն 45—50ի կը հասնի իր ամէն կողմերովը գովելու արժանի է. ամէնքն ալ, գրեթէ առանց բացառութեան պանաղան գործերով կ'ըբաղին և իրենց օրապահիկը կը ճարեն ու այսպէս ցոյց կուտան իրենց պատուաւոր ազգի մը դաւակ ըլլալին: Ասոր հետ մէկտեղ կրնայ ունենալ և իր թերթի կողմերը, օրինակ խաղամուտեմք, գինեմուտեմք և այսպէս անառակ կեանք անցունողներ. այդ ալ մեր պարտականութիւնն է խրատել, որպէսզի անգամ մը ևս չի կրկնուի, և հայութեան պատուոյն արատ չի բերէ:

Երկու խօսք ալ Տիար Պ. Գուսարին, յարգելի պարոնին գրութիւնները հաճոյքով կը կարդանք և կը յարգենք զինքը իր լաւ գրող մը, սակայն կը խնդրենք ի մէն որ իր քաղաքական տեսութեան հետ չի մոռնայ նաեւ երբեմն ազգային կեանքէ ալ գրել. քանի որ աւելի լաւ ծանօթ է տեղւոյս ազգային շրջանակին:

ՀՐԱՆԴ

«ԳԵՂՈՒՆԻ»

«ԲԱՉՄԱՎԷՊ»-ի խմբագրութեան այս նոր թերթի անդրանիկ պրակը հրատարակուած է հետեւեալ պարունակութեամբ:

ՅՕԴՈՒՆԵՐ

ԵՐԵՄ. Հ. Ս. Օգնենք ու գործենք (խմբագրական)

ՂԱՐԻԿԵԱՆ Հ. Ա. — Այտայի հրատարակչ: Ողբերգութիւնը:

ԵՐԵՄ. Հ. Ս. — Գեղունի (նկարագիր արեգաբանական երգապետաց և վերնակոյ ներկայ գեղարուեստի ցուցահանդէսին կային):

Թրքահայ դէմքեր (Պ. Օտեան. — Ս. Մայրապետ Գալփայեան. — Տօք. Փէյտիմալճեան):

ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Դաւրէժ (տեղեկագրական նկարագիր):

ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Իտալ. երաժշտական փառքերու Ռոսսինիի, Պերլինի, Տոնիճէթիի և վերսի խմբանկար:

2. Ապաստան մեղաւորաց (Վենետիկոյ ցուցահանդէսին սրտաշարժ պատկեր) :
3. Դարձ ձկնորսութենէ (գլուխ գործոց տանիմարքոցի Անքեր Միքայէլ նկարչի զարդ Վենետիկեան ցուցահանդէսին) :
4. 5. Այս տարուան մէջ վախճանեալ երկու հռչակաւոր իտալ. նկարիչներու գլուխ գործոցներուն գեղեցիկ պատկերներ :
6. Պ. Օտեան :
7. Ս. Մայրապետ Գալֆայեան :
8. Տ. Փէշտիմալճեան :
9. Դավրէթի Թամարեան մանկապարտէզի աշակերտաց խմբանկար :
10. Դավրէթի Բերդաթաղի տեսարանը :
11. Դավրէթ քաղաքի բնդհանուր տեսարան :
12. Դավրէթի Հայ Օրիորդաց Թամարեան ուսումնարանը :

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մասնաւոր ազդեւորէ մը կրմանանք թէ՛ Մուշի գաւառին մէջ կրկին խուլութիւններ կան. հայ հրոտակախումբ մը, հռչակաւոր Անդրանիկի առաջնորդութեամբ վանք մը գրաւել է և հոն ամրացել է. Թուրք զինուորները վանքը չըջապատել են :

— Հրճուանքով կը յայտարարենք որ Պլք. հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէ թէ Թուրք զօրքէն չըջապատուած Անդրանիկը կրցել է զօրքերու առջեւէն ճամբայ բանալ և ազատիլ :

— Ստացանք Համալսարանի նոր համարը :

— Ռուսչուքէն լուսանկար Տ. Վրդանէսեան մեզի շնորհակցած է Դաշնակցական անձնուէրներու խումբի մը գեղեցիկ լուսանկարը. կը ծախուի Ռուսչուք և խմբագրութեանս մէջ :

Գինն է 2 ֆրանք :

Թիւնը, յիշուի միայն տէր և Տիկին Յակոբեան ինչ ինչ պատճառներով բաժնուած են խմբէս՝ բայց մենք ինչպէս Եթովպիայի տարիներ և այժմ ալ կը վայելենք Պուլկարիոյ պտտուարժան թատերադէր հասարակութեան համակրանքը՝ որուն համար յանհուն երախտապարտ ենք :

ՎԷՍԷԼՕ խումբ

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիական Գոթիկայի կառավարութիւնը մերժած է Անգլիայի զօրք տալ Թրանսվալ զրկելու միայն արտօնած է կամաւորներ հաւաքել :

— Լորտ Գիշնէր տեղեկագրով մը կը հաղորդէ որ քանի մը անգամ անգլիացի զինուորներ առանց կռուելու պօէրներուն անձնատուր եղած են. այդ իրողութիւնը մեծ յուզում առաջ բերած է Անգլիոյ մէջ :

Ռ Ո Ւ Ս Ւ Ս

Լուր տարածուել է որ Կոմս Թօլսթոյ չափազանց հիւանդ է :

— Կըռուի թէ Ռուսիա և Գերմանիա որոշած են պետութիւններուն դիմել վեհաժողով մը գումարելու անիշխանականներու գէժ միջոցներ ձեռք առնելու համար :

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Յոյն ուսանողներու ցոյցերուն պատճառը այն է որ թագուհին հրամայած է Աստուածաշունչը հին յունարէնէն նորի՛ թարգմանել :

— Նախարարապետը հրամարական սուեր է :

### ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

—(II)—

### ՎԷՍԷԼՕ

Հայ Գեր. խումբը առաջնորդութեամբ Ա. Պէնէլեւնի վաղը հինգ շաբթի գիշեր մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ :

ՀԱՅԵՐԷՆՆԵՆԸ

### ՎԱՀԱՆՆԻՄԱՍԻԿՈՆԵԱՆ

Ողբի գութիւն 3 արար

Նոր եկող իտալական երգեցիկ խումբին կ-զմանէ երգեր և պարեր :

ՄՕՐՈՒՍԱԻՈՐ ՀԱՐՍԸ

Խիստ ծիծաղաշարժ գաւեշտ 2 արար

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Յ. Կ. ՊՕՆՃՈՒԲԵԱՆԻ

Նոր Ընթերցարան (պատկերազարդ) Առաջին տարի

(Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած)

Դին 70 Սնթ.

Կը ծախուի Վառնայ Մ. Գալրակճեանի քով :

ՅԱՅՍԱՍՐԱՍԻԹԻՒՆ

Ֆիլիպպի «Հայկական երգեցիկ խումբը» առ շրջանին մէջ վերականգնած ըլլալով արգէն իր պարապմունքները, ձեռնարկած է նաեւ պարբերաբար հրատարակելու եւրոպական ձայնագրութեամբ հայկական հին եւ նոր քառաձայն երգեր, մաքուր թղթի վրայ. յստակ վիճակի :

Այս առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը ներկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտաւոր հայ երիտասարդութեան, որ եթէ առ երգերէն փափագողներ կան, հաճին դիմել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» համար 20 սանթիմ. փոստի ծախսը մեր վրայ. Կան երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղկանան :

Ֆիլիպպի վարչ. «Հայկ. երգեցիկ խումբին» :

Հասցէ՝ Agop Sivadjian Philippopolje

ՅԱՅՍԱՍՐԱՍԻԹԻՒՆ

Հայդելբերգում հիմնուել է մի գրադարան, որ նպատակ է գրել ծանօթացնել արտասահմանի հայ ուսանողութեան և ընդհանրապէս հետաքրքրուող անձանց հայոց ներկայ կիանքին վերաբերեալ հայերէն և օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ :

Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համաստ թիւ որի համար յայտնուած ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը եւ խնդրում ենք այն անձանց հա. տատութիւններին, որոնք կամենում են գրքերով և նւիրատուութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցէով՝

A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. ՊՆԱՐԺՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտման, համակազմութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ :

Գիները յոյժ դիւրամատչելի. Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՆՆՍԻՅ

Отговорникъ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна

Ռուսաստանի և Ամերիկայի ազգայինք Գեղունին դիւրաւ ստանալու համար կարող են դիմել հետեւեալ մեր գործակալաց :

Ռուսաստան. — Գալուստ Գալուստեան Թիֆլիս

Ամերիկա. — «Հայրենիք» Բիւպլիշինկ քոմբանի (64 էսէքս սթր.) Պոսթօն Մաս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տ՛էր

Ազգագուտ լրագրոյդ 367 թուոյն մէջ եռասուղ ստորագրութեամբ Սիլիստրէյէ գրուած նամակ մը խմբիս մասին ակնարկութիւն մը ըրած էր. իբր թէ ՎԷՍԷԼՕ խումբը երկուքի բաժնուած էր՝ որ երբէք տղպիսի բան մը պատահած չէ, խմբիս հաստատ հիմունքը կազմող գերասանք միշտ կը ներկայացնեն ՎԷՍԷԼՕ խումբը և պիտի աշխատին միշտ անխախտ պահել իրենց կազմու.

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Կը հերքուի այն լուրը թէ Ռուսիա թուրք կառավարութեան առաջարկած էր Համաթիէի քուրդները զինաթափ ընել. Ռուսիա Բ. Դուան առաջարկած է միայն զսպել զանոնք քրիստոնէաները չը նեղելու համար :

— Տարտանէլը կամրացուի. Պոլսէն, Գալլիքոլիէն Գրուբի մեծ թնթանութներ բերուել են :

— Կառավարութիւնը 40,000 լիրա կը փնտռէ Մէկքէ գացող սրբազան արաւանը ճամբու գնելու համար :

— Բօնսթան արգէն Պուլիս վերադառնաւ է :

Յրանողական երկրորդ սթասիօնէրի մը Պուլիս մտնելու համար նոր անհամաձայնութիւններ տեղի ունեցեր են թուրք և ֆրանսական կառավարութեան միջև սակայն կը յուսացուի որ այդ անհամաձայնութիւնը աւելի մեղմութեամբ պիտի կարգադրուի :